



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 18 » ապրիլի 2018 թվականի N: 23 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ
100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 6-ի նիստի N 9 արձանագրության 16-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման 3-րդ կետի դրույթներով

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման գործընթացը համակարգելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) 10-օրյա ժամկետում ներկայացնել Շիրակի մարզի համայնքներում Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների անցկացման ժամանակացույցը:

2) Պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքներում Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ:

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է



Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ
100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Արթուր Խաչատրյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ,
հանձնաժողովի նախագահ,
- Սեյրան Պետրոսյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ,
հանձնաժողովի անդամ,
- Խաչատուր Պողոսյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի անդամ,
- Սամվել Բալասանյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի
համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամ
(համաձայնությամբ),
- Մխիթար Վարազյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ
համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամ
(համաձայնությամբ),
- Արտակ Գևորգյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
ղեկավար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
- Հասմիկ Կիրակոսյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
խորհրդական, հանձնաժողովի անդամ,
- Հրայր Կարապետյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության
պետ, հանձնաժողովի անդամ,
- Արամ Անտոնյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի տեղական ինքնակառավարման և
հանրապետական գործադիր մարմինների հարցերով
վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
- Լիպարիտ Մարտիրոսյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
- Գեղամ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,
հանձնաժողովի անդամ,
- Սամվել Գրիգորյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության
կապերի բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
- Արտուշ Մկրտչյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու
համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և
երիտասարդության հարցերի բաժնի պետ, հանձնաժողովի
անդամ (համաձայնությամբ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Խ.ՊՈՂՈՍՅԱՆ